Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԼՑ1 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 6. Լոռի – ցերեկային կենտրոն (Վանաձոր, Ալավերդի) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2025 -31.03.2025թթ. |
| Ներկայացման օր | 03.04.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 45 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 5 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել են հետևյալ թեմաներով դասընթացներ՝ «Ընտանիքին ուղղված սոցիալական բարեկեցության համակարգը ՀՀ-ում», «Համոզման նշանակությունը փոխհարաբերություններում: Համոզման կանոնները»:
  Հոգեբանական աջակցության շրջանակներում հոգեբանի կողմից հաշվետու ժամանակահատվածում 13 շահառուի հետ իրականացվել է 6 խմբային աշխատանք՝ յուրաքանչյուր խմբում 5-7 շահառուի ներգրավմամբ: Խմբային աշխատանքներն իրականացվել են հետևյալ թեմաներով՝ «Կոգնիտիվ ճկունության դերը սոցիալ-հոգեբանական ադապտացիայի գործընթացում», «Մտածողության, արագ կողմնորոշվելու գործընթացի էությունը, գնահատումը», «Հոգեկան գործընթացների ֆունկցիոնալ դերը հոգեկան առողջության պահպանման հարցում»:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 6 խմբակ՝
  - Ձեռագործություն և ջուլհագործություն,
  - Առողջապահական,
  - Գրական,
  - Հոգեբանական,
  - Նկարչական,
  - Խոհարարական:

  Կազմակերպվել է թվով 8 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 20 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝

- ✓ Սուրբ Ծննունդ,
- ✓ Հին Նոր տարի,
- ✓ Տյառնընդառաջ,
- ✓ Կանանց միջազգային օր,
- ✓ Շահառուների ծննդյան օրերի նշում (երկու անգամ),
- ✓ Հայկական բանակի օր:

- **Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է թվով 4 հանդիպում՝ ուղղված խմբային աշխատանքի հմտությունների ձեռքբերմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը, որին մասնակցել է 20 շահառու:
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են կենտրոնի առօրյան ներկայացնող հետևյալ նյութերը՝

- Զարգացնում ենք ուշադրությունը (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/ikfaaa ),
- Տյառնընդառաջ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/udjsma),
- Հայոց բանակի օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/hwojaz),
- Լոռու մարզային գրադարանի նվերը մեր տարեցներին (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://surl.li/zaxaww),
- Անվճար վարսավիրական ծառայությունների մատուցում շահառուներին (տե՛ս հետևյալ հղմամբ https://surl.li/jbkqvm):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.

- ➢ սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ➢ ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- ➢ աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- ➢ կենտրոնում սննդի կազմակերպում,
- ➢ բաղնիքի ծառայության տրամադրում,
- ➢ այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 30/45 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 25 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 8 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 8 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 37 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 45 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 20 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 20 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 35 |
| 5.1 | Առողջապահական | 12 |
| 5.2 | գրական | 14 |
| 5.3 | Հոգեբանական | 8 |
| 5.4 | Նկարչական | 10 |
| 5.5 | ձեռագործության և ջուլհագործության | 6 |
| 6 | Մշակութային մոջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 42 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 15 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 04. 2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)